

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 27(1)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ընդարձակ նիստի

ք. Երևան

10 ապրիլի 2009 թվականի

Նախագահում էր՝

- | | |
|------------------|--|
| S. Սարգսյան | - Հայաստանի Հանրապետության վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ |
| Մասնակցում էին՝ | |
| Վ. Ներսիսյանց | - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ |
| Վ. Դանիելյան | - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Ս. Պետրոսյան | - ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ |
| Ռ. Հարությունյան | - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ, գլխավոր տնօրեն |
| Ա. Գրիգորյան | - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերով քարտուղարության պետ, խորհրդի քարտուղար |
| Յ. Շուքուրյան | - ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս |
| Գ. Զուգասպյան | - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ |
| Ա. Ալեքսանյան | - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության տնօրեն |
| Ա. Տոնոյան | - «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ |
| Մ. Մարկոսյան | - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ |
| Կ. Վարդանյան | - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն |
| Գ. Կարապետյան | - «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ |
| Գ. Էվոյան | - «Հայլինք» ՍՊԸ-ի տնօրեն |
| Վ. Մասերեջյան | - «Վիրաժ Լոջիք» ամերիկյան ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն |

Ա. Մխիթարյան	- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Բ. Ենգիբարյան	- «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
Է. Մանուկյան	- «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Բաղդրյան	- «Յունիքումի» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Վ. Ալեքսանդրյան	- Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանի ռեկտոր
Հ. Խանջյան	- «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Ռ. Աղգաշյան	- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր
Ռ. Աթոյան	- «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Գ. Հովհանիսյան	- «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Հ. Մուսայելյան	«Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Հ. Ավոյան	- «Սոքսիո» ՓԲԸ-ի տնօրեն
Հ. Չոբանյան	- «Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Սալաթյան	- «Նեյշնլ ինսթրումենթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Ս. Մեհրաբյան	- «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ի տնօրեն
Գ. Բարսեղյան	- «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
Գ. Պարոնյան	- «Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Կոնտակչյան	- «ԳԻՍ» տեղեկատվական համակարգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Հ. Վարդանյան	- «Էյ Փի Ջի Լեբս ԱՄԱԲ» ՍՊԸ ՀՄ-ի տնօրեն
Ռ. Վարդանյան	- «Քվանտ» վարժարանի տնօրեն
Մ. Փափազյան	- «ԷյՓիՋի Արմ» ՍՊԸ-ի տնօրեն
Ս. Մուրադյան	- «Ավիաինֆոտել » ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Հրավիրվածներ`	
Դ. Սարգսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Ն. Երիցյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Ա. Հարությունյան	- ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Մաքսային հսկողության բաժնի պետ
Գ. Քառյան	- ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Մաքսային ընթացակարգերի բաժնի պետ
Ա. Բաբուրյան	- ՀՀ պաշտպանության նախարարություն, գեներալ մայոր, կապի վարչության գործերի պետ
Ֆ. Սողոմոնյան	- ՀՀ պաշտպանության նախարարություն, կապի վարչության պետի տեղակալ
Գ. Զաքարյան	- ՀՀ պաշտպանության նախարարություն, կապի վարչության պետի տեղակալ
Ա. Գևորգյան	- ՀՀ պաշտպանության նախարարություն, Իրավաբանական վարչություն
Ս. Սիմոնյան	- ՀՀ պաշտպանության նախարարություն, Իրավաբանական վարչություն
Պ. Դեմիրճյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Հ. Բալայան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ա. Քուչուկյան	- «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
Ա. Մանուկյան	- «Մեսիս» ՍՊԸ-ի տնօրեն
Վ. Կիրակոսյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ
Ա. Գրիգորյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեղեկատվական հասարակության ձևավորման և Էլեկտրոնային կառավարման վարչության պետ
Մ. Հակոբյան	- “Տեղեկատվական իրավունքի և քաղաքականության կենտրոն” հասարակական կազմակերպության իրավախորհրդատու
Գ. Գևորգյան	- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ
Ժ. Ազիզյան	- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության պետ

Մ. Մելիքյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Հասարակայնության հետ կապերի մասնագետ
Ա. Ղազարյան	- CAPS ծրագրի տնօրենի տեղակալ
Ա. Աբրահամյան	- CAPS ծրագրի SS կլաստերի համակարգող
Ա. Սարգսյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
Լ. Եղիազարյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ
Ա. Հայրիյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի
հանձնարարականների կատարման ընթացքի մասին

SSՁԱ Խորհրդի գործադիր քարտուղար Ա. Գրիգորյան
ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան
Ռազմավարական քաղաքականության ԱՄ-ի ղեկավար Ա. Քուչուկյան
Ներդրումների և բիզնես հնարավորությունների ԱՄ-ի ղեկավար Բ. Ենգիբարյան
Գիտակրթական ԱՄ-ի ղեկավար Գ. Չուքասզյան
Իրավակարգավորման ԱՄ Մ. Հակոբյան

2. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի մասին

Իրավակարգավորման ԱՄ Մ. Հակոբյան

3. Մաքսային օրենսդրության և վարչարարության բարեփոխումների
առաջարկությունների փաթեթ,

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության տնօրեն Կ. Վարդանյան

4. Տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ միջազգային
տարբեր տեսակի հետազոտություններում մեր ցածր վարկանիշի հարցը

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության տնօրեն Կ. Վարդանյան

5. Այլ հարցեր

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ
նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Գ. Գևորգյան, Ռ. Աղգաշյան, Է. Մանուկյան, Ս. Պետրոսյան, Ս. Մուրադյան, Ս. Մարկոսյան, Բ. Ենգիբարյան, Հ. Մուսայելյան, Կ. Վարդանյան, Հ. Ավոյան, Ա. Քուչուկյան, Գ. Չուգասցյան, Ս. Մուրադյան, Ա. Բաղդրյան, Ս. Փափազյան, Ա. Գրիգորյան)

1. Արձանագրություն. N26(3) 4-րդ կետ

ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Հեռահաղորդակցության վարչության պետ Գ. Գևորգյանը ներկայացրեցին ՀՀ-ում ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման ողջ գործընթացին վերաբերող համաձայնեցված տարբերակը՝ մասնավորապես, արբանյակային կապի երկրային ամրակցված կայանների թույլտվության տրամադրման արժեքը մեկ կայանի համար անկախ քանակից սահմանել 200 հազ. դրամ, իսկ արբանյակային կապի երկրային ամրակցված կայանների օգտագործման տարեկան վճարը նվազեցնել մինչև 50 հազ. դրամ, ինչպես նաև արբանյակային կապի հաճախականությունների տրամադրման գործընթացի տևողությունը կրճատել մինչև 10 աշխատանքային օր: Միաժամանակ նշեվեց, որ համաձայնեցված տարբերակը մեծամասամբ ՏՏՀԱ Խորհրդի կողմից ներկայացված առաջարկն է:

բ. Որոշվեց ընդունել ի գիտություն ՀՀ-ում ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման ողջ գործընթացի համաձայնեցված տարբերակը:

2. Արձանագրություն. N26(3) 7-րդ կետ

ա. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը և Է. Մանուկյանը ներկայացրեցին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված միջոցառումների մասին տեղեկատվություն՝ հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, մասնավորապես, նշվեց որ մինչև այսօր ֆինանսական միջոցներ հնարավոր չի եղել տրամադրել:

բ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին լուծել հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրի

իրականացմանը ֆինանսական աջակցման հարցը:

3. Արձանագրություն. N26(3) 9-րդ կետ

«Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպությանը ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է Էլեկտրոնային բովանդակության մրցույթի անցկացման համար նախատեսված պետական ֆինանսավորումը:

4. Արձանագրություն. N26(3) 11-րդ կետ

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ ՀՀ Հարկային օրենսդրության վերաբերյալ երկու հարցերը փոխանցվել են Գործարարության աջակցման խորհրդին: Հարցերը գտնվում են քննարկման փուլում:

5. Արձանագրություն. N26(3) 15-րդ կետ

ա. Ներդրումների և բիզնես հնարավորությունների աշխատանքային խմբի ղեկավար, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանը ներկայացրեց SS ընկերությունների կողմից համատեղ կառույց ստեղծելու նախատեսվող մոդելը, որը քննարկվել է Ներդրումների և բիզնես հնարավորությունների աշխատանքային խմբում և այլ հանդիպումների ընթացքում: Մոդելը հավանության է արժանացել SS ընկերությունների կողմից:

բ. Որոշվեց ընդունել ի գիտություն SS ընկերությունների կողմից համատեղ կառույց ստեղծելու նախատեսվող մոդելը:

6. Արձանագրություն. N26(3) 17ա կետ

Գնումների գործակալությունը տեղեկացրեց, որ վերջին մի քանի տարիների ընթացքում հայտարարված մրցույթներին մասնակցում և հաղթում են հիմնականում հայաստանյան ընկերությունները:

7. Արձանագրություն. N26(3) 17բ կետ

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ աջակցության նպատակով իրենց են դիմել «Սորսիո» և «Լայքս» ընկերությունները: «Սորսիո» ընկերությանը արդեն տրամադրվել է ֆինանսական օգնություն, այժմ քննարկվում է «Լայքս» ընկերությանը աջակցություն տրամադրելու հարցը:

8. Արձանագրություն. N26(3) 19ա կետ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը ներկայացրեց երկակի նշանակության ապրանքների թույլտվության կարգի փոփոխման վերաբերյալ Իրավակարգավորման աշխատանքային խմբում տեղի ունեցած քննարկումների մասին տեղեկատվություն, մասնավորապես, ասվեց,

որ խնդիրը բավականին բարդ է և անհրաժեշտություն կա ավելի հանգամանալից քննարկումներ կազմակերպել՝ հետագայում առաջարկություն ներկայացնելու նպատակով:

9. Արձանագրություն. N26(3) 19բ կետ

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ ապրանքների ծագման սերտիֆիկատի տրման գործընթացը հեշտացնելու նպատակով՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը պատրաստում է օրենքի նախագիծ, որը պատրաստ լինելուց հետո կներկայացվի խորհրդի համապատասխան աշխատանքային խմբերի քննարկմանը:

10. Արձանագրություն. N26(3) 19գ կետ

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ նորաստեղծ ընկերությունների գործընթացը հեշտացնելու համար ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը մայիս ամսին խորհրդի աշխատանքային խմբերի քննարկմանը կներկայացնի «Մի կանգառի կենտրոն» սկզբունքով «Online» բիզնեսի ձևակերպման առաջարկությունների փաթեթ, որը բխում է նաև Համաշխարհային բանկի նկատմամբ մեր կողմից վերցրած պարտավորություններից:

11. Արձանագրություն. N26(3) 21-րդ կետ

ա. «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հ. Մուսայեյանը ներկայացրեց ՀՀ-ում SS մեծագույն հայտնագործությունների և լավագույն աշխատանքների համար միջազգային նախագահական մրցանակի կազմակերպման աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, ասվեց, որ արդեն շուտով կհրապարակվի նախագահի հրամանագիրը, մրցանակաբաշխության հանձնաժողովի ստեղծման կարգը և անդամների ցանկը:

բ. Որոշվեց ընդունել ի գիտություն SS մեծագույն հայտնագործությունների և լավագույն աշխատանքների համար ՀՀ-ում միջազգային նախագահական մրցանակ սահմանելու մասին տեղեկատվությունը:

12. Արձանագրություն. N26(3) 22-րդ կետ

ա. «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հ. Մուսայեյանը առաջարկեց ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով՝ ՀՀ-ում SS մենեջերների մրցույթ կազմակերպել, որի արդյունքում ընտրված լավագույն երեք մենեջերներին հնարավորություն կտրվի վերապատրաստվելու աշխարհի լավագույն համալսարաններում:

բ. Հանձնարարվեց ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պրն. Դ.

Սարգսյանին ընդունված կարգով ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով՝ ՀՀ-ում ՏՏ մենեջերների մրցույթներ կազմակերպելու համար:

13. Արձանագրություն. N26(3) 23-րդ կետ

Խորհրդի Գիտության և կրթության աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասզյանը տեղեկացրեց, որ տեղի են ունեցել աշխատանքային խմբի հանդիպումներ, որտեղ քննարկվել են ՀՀ բուհերում ՏՏ ոլորտում մասնագիտացված նոր ամբիոնների բացման հարցը, և քննարկման արդյունքում՝ աշխատանքային խումբը եկավ այն եզրակացության, որ այսօր նման պահանջարկ չկա:

14. Արձանագրություն. N26(3) 25-րդ կետ

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը տեղեկացրեց, որ մշակվել է Մտավոր սեփականության պաշտպանության հայեցակարգ, որտեղ առանձին բաժին հատկացված է հեղինակային իրավունքի պաշտպանությանը և, որ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից ներկայացված հեղինակային իրավունքի պաշտպանության վերաբերյալ առաջարկությունների փաթեթը առաջիկայում կներկայացվի քննարկման միջգերատեսչական հանձնաժողովում:

15. Արձանագրություն. N26(3) 27-րդ կետ

Խորհրդի Գիտության և կրթության աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասզյանը տեղեկացրեց, որ աշխատանքային խմբում քննարկվել են «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգի» դրույթները, այնուհետև «Էլեկտրոնային բովանդակության» միությունը ձեռնամուխ է եղել հայեցակարգի ստեղծման աշխատանքներին և ներկայումս ներկայացնում են հայեցակարգի նախնական տարբերակը, որը առաջիկայում կդրվի աշխատանքային խմբի քննարկման:

16. Արձանագրություն. N26(3) 30-րդ կետ

Խորհրդի Ռազմավարական քաղաքականության աշխատանքային խմբի ղեկավար Ա. Քուչուկյանը և պրն. Գ. Չուգասզյանը ներկայացրեցին Ինտերնետի կառավարման համաժողով կազմակերպելու առաջարկը, մասնավորապես, խոսեցին համաժողովի կազմակերպման կարևորության մասին՝ կարևորելով համաժողովի նախապատրաստական զգալի աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը:

17. Արձանագրություն. N26(3) 32-րդ կետ

Խորհրդի Գիտության և կրթության աշխատանքային խմբի ղեկավար Գ.

Չուգասզյանը տեղեկացրեց, որ աշխատանքային խմբում քննարկվել է «Էթնիկ ցանց» ստեղծելու գաղափարը, քննարկման ընթացքում առաջարկվել են մի քանի տարբերակներ: Միյուրոքի նախարարությունը ևս ստեղծում է նման մի պորտալ: Ինչպես նաև ավելացրեց, որ գերադասելի է ստեղծել ոլորտը միավորող մասնագիտական ցանց, ինչպիսին կարող է լինել «ԱրմԹեք» ցանցը:

18. Արձանագրություն. N26(3) 33-րդ կետ

ա. Խորհրդի Ռազմավարական քաղաքականության աշխատանքային խմբի ղեկավար Ա. Քուչուկյանը և ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեցին Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն, համակարգի ներդրմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների ցանկը՝ մոտավոր բյուջեով, որոնք նպատակահարմար են գտնում սկսել 2009թ-ից:

բ. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հավանություն տալով կատարված աշխատանքներին, առաջարկեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին՝ Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքների կազմակերպման գործընթացներին հրավիրել խորհրդի ներկայացուցիչներին, մասնավորապես՝ Ռազմավարական քաղաքականության աշխատանքային խմբի ղեկավար պրն. Քուչուկյանին:

19. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը, ամփոփելով նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքը, արձանագրեց, որ որոշ հարցեր ստացել են լուծում, սակայն կան հարցեր, որոնք դեռ լուծման կարիք ունեն, և խոստացավ լինել խիստ հետևողական և բոլոր սկզբունքային հարցերը պահել ուշադրության կենտրոնում:

2. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի մասին

(Տ. Սարգսյան, Մ. Հակոբյան, Գ. Գևորգյան, Ն. Երիցյան, Ա. Բաբուրյան, Վ. Դանիելյան, Ա.

Ալեքսանյան, Ա. Գրիգորյան)

20. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի մասին տեղեկատվություն ներկայացրեցին Խորհրդի Իրավակարգավորման աշխատանքային խմբի անդամ Մ. Հակոբյանը և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Հեռահաղորդակցության վարչության պետ Գ. Գևորգյանը, որոնք մասնավորապես պնդեցին որ`

ա. Հաղորդակցության ոլորտի կարգավորումը և վերահսկողությունը իրականացվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով և լրացուցիչ կարգավորման անհրաժեշտություն չկա,

բ. 9-րդ հոդվածի 3-րդ կետը խոչընդոտ կհանդիսանա հեռահաղորդակցության բնագավառի զարգացման համար:

գ. Առաջարկվեց 3 կետը ձևակերպել հետևյալ կերպ. *“Խաղաղ ժամանակ պետական նշանակություն ունեցող կապի համակարգի` Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործումն իրականացվում է պաշտպանության շահերից բխող խնդիրների առաջնայնությունը հաշվի առնելով` համաձայն Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման հատուկ պայմանների:*

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինը սահմանում է պաշտպանության խնդիրներից բխող Էլեկտրոնային հաղորդակցության հանրային ցանցերի օպերատորների լիցենզավորման հատուկ պայմաններ` հաշվի առնելով պաշտպանության և ազգային անվտանգության պետական մարմինների առաջարկները և պահանջները:”

21. ՀՀ Պաշտպանության նախարարության կապի գորքերի պետ, գեներալ մայոր Ա. Բաբուրյանը ներկայացրեց նախարարության կարծիքը, տեղեկացրեց, որ Էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման իրականացումը իրենց հետաքրքրում է միայն ղեկավարման համակարգում տեղեկատվության փոխանակման մասով և, որ մասնավոր ընկերությունները կազմակերպչական և տեխնիկական հարցերը Տրանսպորտի և կապի նախարարության միջոցով պետք է համաձայնեցնեն ՀՀ պաշտպանության նախարարության հետ, և իրենք «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի փոփոխությունը գտնում են ոչ նպատակահարմար:

22. ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Դանիելյանը տեղեկացրեց, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը արդեն մշակել է կարգ, որը բավարարում է պաշտպանության նախարարության պահանջները: Որպեսզի չգործի «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետը, անհրաժեշտ է դիմել

Պաշտպանության նախարարությանը՝ պաշտոնական մեկնաբանություն տալու
«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ:

23. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը պնդեց, որ այդ լուծումը կարող է
կարճաժամկետ լուծում տալ, բայց դրա հետ մեկտեղ անհրաժեշտություն կա
«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետը փոփոխել:

24. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող
խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց կարճաժամկետ լուծման համար
ստանալ Պաշտպանության նախարարության պաշտոնական մեկնաբանությունը,
իսկ վերջնական լուծման նպատակով՝ պատրաստել առաջարկ «Պաշտպանության
մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետը փոփոխելու համար:

3. Մաքսային օրենսդրության և վարչարարության բարեփոխումների առաջարկությունների փաթեթ

(Ս. Սարգսյան, Կ. Վարդանյան, Ն. Երիցյան, Ա. Հարությունյան, Գ. Քառյան,)

25. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»
հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը ներկայացրեց
մաքսային վարչարարության գործընթացներում Տեղեկատվական տեխնոլոգիաների
ոլորտում գործող ձեռնարկություններին մտահոգող հարցերի շրջանակը:

26. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության բաժնի պետ Ա.
Հարությունյանը և մաքսային ընթացակարգերի բաժնի պետ Գ. Քառյանը
ներկայացրեցին իրենց մոտեցումները այդ հարցերի վերաբերյալ:

27. ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող
խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց, որ «Տեղեկատվական
տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական
կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը մեկ շաբաթվա ընթացքում
հավաքագրի և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացնի մաքսային
վարչարարության գործընթացներում ՏՏ ոլորտին մտահոգող հարցերը: Երկու
շաբաթվա ընթացքում ակնկալվում է ստանալ այդ հարցերի շուրջ պաշտոնական
պարզաբանումներ, և եթե այդ պաշտոնական պարզաբանումների մեջ կլինեն
մեկնաբանումներ, որոնք կխոչընդոտեն բիզնեսի զարգացմանն, ապա կոնկրետ

անդրադարձ կկատարվի այդ հարցերին, որպեսզի իրականացվեն փոփոխություններ, որոնք կնպաստեն բիզնեսի զարգացմանը:

4. Տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ միջազգային տարբեր տեսակի հետազոտություններում մեր ցածր վարկանիշի հարցը

(Տ. Սարգսյան, Կ. Վարդանյան, Ն. Երիցյան, Ա. Բալդրյան, Հ. Ավոյան, Հ. Մուսայելյան, Վ. Ներսիսյան, Գ. Զուգասյան, Ս. Մեհրաբյան, Մ. Փափազյան, Բ. Ենգիբարյան, Ա. Քուչուկյան)

28. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանը ներկայացրեց տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների արդյունքները, որոնց մեջ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ՏՀՏ օգտագործող երկիր 120-րդ տեղում էր, որպես ՏՀՏ պատրասվածություն՝ 111-րդ և որպես ՏՀՏ միջավայր՝ 109 տեղում: Արդյունքները շատ ցածր են և՛ տարածաշրջանի երկրների հետ համեմատած, և՛, ընդհանրապես, ամբողջ աշխարհի շրջանակում: Նշվեց երկրի զարգացման գործում անհրաժեշտ է ՀՀ հասարակության կողմից ՏՀՏ-ի կարևորության գիտակցումը:

29. ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը կարևորեց երկրում ՏՀՏ ոլորտի կարևորությունը բարձրացնող միջոցառումների իրականացում, մասնավորապես, Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա հասարակությանը տարբեր Էլեկտրոնային ծառայություններ մատուցել: Կարևորվեց նաև կրթական համակարգում ուսումնական գործընթացների մեջ Էլեկտրոնային միջոցների ներդրումը:

30. Տեղի ունեցան քննարկումներ և արվեցին առաջարկներ:

31. ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Սեյրանյանին ներկայացնել «Կրթության մասին» օրենքի 4 գլխի հոդված 21-ի, 2-ի 8-րդ կետի՝ «առկա, հեռակա, հեռավոր (դիստանցիոն) և դրսեկրթության (էքստենսատի) ձևերով ուսուցման կարգերի» հաստատման մասին

տեղեկատվություն:

32. ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին հաջորդ նիստում ներկայացնել տեղեկատվություն «Ամեն ընտանիքին մեկ համակարգիչ» («Համակարգիչ բոլորի համար») ծրագրի մասին:
33. ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Սեյրանյանին՝ ներկայացնել բոլոր դպրոցներում անխտիր համակարգչային գրագիտություն ստանալու ծրագրի իրականացման մասին տեղեկատվություն՝ որպես հիմք վերցնելով Էստոնիայի օրինակը՝ «Վագրի ցառք» նախագիծը:
34. ՀՀ վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը առաջարկեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին կազմակերպել քննարկումներ «Յանցային պատրաստվածության ցուցանիշների» վերաբերյալ և «Էլեկտրոնային բովանդակության» հասարակական կազմակերպության ու «Արժեքներ և տնտեսություն» հասարակական կազմակերպության հետ համատեղ քննարկման արդյունքում ձևավորված կարծիքների հիման վրա ներկայացնել այն միջոցառումների ցանկը, որոնց իրականացման արդյունքում երկրի ցանցային պատրաստվածության մակարդակը կբարելավվի:

5. Այլ հարցեր

(Տ. Սարգսյան, Ն. Երիցյան, Հ. Մուսայելյան)

35. «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հ. Մուսայելյանը տեղեկացրեց, որ Օքսֆորդի համալսարանի հիմնադրամը իրականացնում է հատուկ ծրագիր Արևելյան Եվրոպայի երկրների համար երկու տարի ժամկետով: Սակայն անհրաժեշտ է, որ ՀՀ մասնագետներին տեղեր հատկացնելու համար՝ տվյալ հիմնադրամին դիմի համապատասխան մարմինը
36. Հանձնարարվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարությանը՝ Խորհրդի անունից դիմել համապատասխան

հիմնադրամին, որպեսզի քվոտաներ ներկայացնի Հայաստանի Հանրապետության
մասնագետների համար:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ **Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն** S.
ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն** Ա.
ԳՐԻԳՈՐՅԱՆ